

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ. հունվար-օգոստոսին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 188.9 մլրդ.դրամ, որը 2002թ. նակարդակը գերազանցել է 0.1%-ով: 2003թ. օգոստոսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է հուլիսի 107.1%-ը:

Հանրապետությունում ընթանում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով, 2003թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը, բացի բանջարաբուստանային մշակաբույսերից, զիջել է 2002թ. նակարդակը:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2003թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
ք.Երևան	0.2	101.4	2.8	112.0	30.8	101.7
Արագածոտն	5.5	107.8	50.2	116.7	19.0	122.6
Արարատ	4.5	102.3	32.5	109.4	28.2	129.4
Արմավիր	6.1	141.9	28.1	115.6	26.8	131.4
Գեղարքունիք	8.0	102.6	77.3	110.7	27.4	129.2
Լոռի	5.1	110.9	51.1	120.2	16.6	141.9
Կոտայք	4.9	104.3	44.2	116.3	124.8	90.1
Շիրակ	7.1	107.6	65.2	115.0	25.6	114.8
Սյունիք	4.0	111.1	36.6	112.3	11.0	118.3
Վայոց ձոր	1.8	100.0	16.4	110.8	8.3	120.3
Տավուշ	3.8	100.0	29.7	108.8	13.7	101.6
Ընդամենը ՀՀ	51.0	106.3	434.1	113.9	332.2	105.8

2003թ. հունվար-օգոստոսին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 3.0 հազ. տոննայով կամ 6.3%-ով, կաթի արտադրությունը՝ 50.9 հազ. տոննայով կամ 13.9%-ով, ձվինը՝ 18.3 մլն. հատով կամ 5.8%-ով:

¹ *Ներառյալ ներքին սպառումը*

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-օգոստոսին»